

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն.....	3
1.2. Շինարարություն.....	4
1.3. Ծառայություններ	5
1.4. Առևտուր.....	6
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱՐՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	11
5.1. Բյուջեի եկամուտները	11
5.2. Պետական պարտք	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	13
6.1. Գնաճ	13
6.2. Ավանդներ	14
6.3. Վարկեր	15
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	17
8. ԱՄՓՈՓՈՒՄ	18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի երրորդ եռամսյակի դրությամբ արձանագրված տնտեսական արդյունքները բավական մտահոգիչ են: Տնտեսության աճի տեմպը շարունակաբար դանդաղում է վերջին ամիսներին, իսկ օգոստոս և սեպտեմբեր ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) կտրուկ դանդաղել է՝ հասնելով համապատասխանաբար 2.2 և 2.4 տոկոսի: Դա նշանակում է, որ տնտեսությունը չի վերականգնվում, քանի որ նախորդ տարի այդ ամիսներին գրանցվել էր բացարձակ արժեքով ավելի մեծ տնտեսական աճ (11.4% և 7.7%): Այդ պայմաններում կուտակային տնտեսական աճի տեմպը նույնպես դանդաղում է՝ հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմելով 4.4% և նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.4 տոկոսային կետով: Այս զարգացումների պայմաններում տարեկան տնտեսական աճը նույնպես ցածր կլինի: Այսպես, նախորդ տարվա 4-րդ եռամսյակում ՏԱՑ-ի աճումը խորացել էր շուրջ 0.7 տոկոսային կետով, ինչը նշանակում է, որ ընթացիկ տարում առկա կլինի այդ չափով բազայի դրական էֆեկտ, իսկ տարեկան ՏԱՑ-ը կկազմի շուրջ 5.1%: Սակայն, վերջին ամիսներին ՏԱՑ-ի դանդաղման պատճառ հանդիսացող գործոնների պահպանման պայմաններում տնտեսական ակտիվության տեմպը կշարունակի դանդաղել՝ տարեվերջին լինելով 4%-ի շուրջ: Վերջինս (նույնիսկ լավատեսական ենթադրության՝ 5.1%-ի դեպքում) բավական հեռու է խոստացված երկնիշ տնտեսական աճից, հետևաբար կառավարության անդամները առնվազն պետք է պարզաբանեն խոստումների չիրականացման պատճառները և ներկայացնեն այն քաղաքականության միջոցառումները, որոնք նպաստելու են մինչև տարեվերջ տնտեսական ակտիվության տեմպի արագացմանը:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




Տնտեսական ակտիվության նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են, ինչի արդյունքում 0.1 տոկոսային կետով վատթարացել է հունվար, հունվար-մարտ ամիսների և դրանից հետո բոլոր ամիսների կուտակային տնտեսական ակտիվության ցուցանիշները:

2021թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ՏԱՑ-ի 4.4% աճն առավելապես պայմանավորված է առևտրի ոլորտում տնտեսական ակտիվության աճով, որի նպաստումը կազմել է 2.3 տոկոսային կետ: Մնացած ոլորտները նույնպես ունեցել են դրական նպաստում տնտեսական ակտիվությանը, որոնցից նշանակալի է եղել ծառայությունների նպաստումը 1.2 տոկոսային կետով, իսկ արդյունաբերության և շինարարության նպաստումները կազմել են համապատասխանաբար 0.2 և 0.3 տոկոսային կետ:


Գյուղատնտեսության ոլորտում հունվար-սեպտեմբեր ամիսներին գրանցվել է շուրջ 1.5% անկում, ինչն ընդհանուր ՏԱՑ-ի աճին հակազդել է 0.2 տոկոսային կետով:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2021թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում օգոստոսին գրանցված խոր անկումը փոքրինչ մեղմվել է, սակայն դրական տիրույթ չի վերադարձել: Սեպտեմբերին արդյունաբերության ոլորտում գրանցվել է 1.2% անկում, ինչը թեև զգալիորեն փոքր է օգոստոսին գրանցված 5.2% անկման ցուցանիշից, սակայն նպաստել է արդյունաբերության կուտակային աճի դանդաղմանը: Հունվար-սեպտեմբեր ամիսների աճը կազմել է 0.7%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.3 տոկոսային կետով:

2021թ. հունվար-օգոստոս ամիսների տվյալներով՝ արդյունաբերության աճի կտրուկ դանդաղումը պայմանավորված է եղել հանքարդյունաբերության ոլորտի զարգացումներով: Այսպես, հանքարդյունաբերության իրական թողարկումը 2021թ. օգոստոսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ կրճատվել է շուրջ 18%-ով, իսկ կուտակային՝ հունվար-օգոստոսի աճը դանդաղել է շուրջ 4.0 տոկոսային կետով՝ կազմելով 3.3%: Արդյունքում հանքարդյունաբերության նպաստումը ընդհանուր արդյունաբերության աճին դանդաղել է՝ 1.5 տոկոսային կետի փոխարեն կազմելով 0.7 տոկոսային կետ: Այսպիսի զարգացումների պատճառները կարող են լինել քաղաքական պատճառներով հանքարդյունահանող կազմակերպություններում իրականացվող ստուգումները, ինչպես նաև արտահանման տուրքի ներդրումը, որը հանքարդյունահանողները պետք է վճարեն սեպտեմբերից սկսած արտահանում իրականացնելու համար:


¹ Արդյունաբերության կառուցվածքը 2021թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

Մշակող արդյունաբերությունը ինչպես հունվար-հուլիս, այնպես էլ հունվար-օգոստոս ամիսներին շարունակել է անկում գրանցել, սակայն անկման տեմպը խորացել է 0.1 տոկոսային կետով՝ կազմելով 1.2%, իսկ ընդհանուր արդյունաբերությանը նպաստումը կազմել է -0.8 տոկոսային կետ:

«Էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղերում գրանցվել է աճ համապատասխանաբար 7.6% և 7.2%, որոնց նպաստումը ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է համապատասխանաբար 1.0 և 0.1 տոկոսային կետ:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ոլորտի աճի տեմպի դանդաղման միտումը պահպանվում է: Շինարարության ծավալների 12-ամսյա աճերը (աճը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ) բավական ցածր մակարդակում են պահպանվում սկսած ընթացիկ տարվա մայիսից, ինչի արդյունքում անընդհատ դանդաղում է կուտակային աճի տեմպը: Հունվար-սեպտեմբեր ամիսներին կուտակային աճը հասել է 6.4%-ի, որը բացարձակ արժեքով զգալիորեն փոքր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված անկումից: Դա նշանակում է, որ այս ոլորտում նույնպես վերականգնում տեղի չի ունենում, իսկ 2019թ. համեմատ անկումը կազմում է շուրջ 10.3%:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների ճյուղում աճի տեմպը նույնպես շարունակաբար դանդաղում է: 2021թ. սեպտեմբերին ծառայությունների աճը կազմել է 9.6%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.6 տոկոսային կետով, իսկ հունվար-սեպտեմբեր ամիսների աճը կազմել է 5.4%: Ընդ որում, ծառայությունների աճի տեմպը բացարձակ արժեքով զգալիորեն ցածր է նախորդ տարվա անկման ցուցանիշներից, ինչի արդյունքում դեռևս չի հաջողվում է վերականգնել 2019թ. մակարդակը: 2019թ. նույն ժամանակահատվածի համեմատ, 2021թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ծառայությունների ոլորտը գրանցել է անկում՝ շուրջ 7.1%-ով:


ՀՀ ՎԿ-ն զգալի չափով վերանայել է ծառայությունների ոլորտի նախորդ ամիսների ցուցանիշները, ինչի արդյունքում շուրջ 0.3-0.5 տոկոսային կետով վատթարացել են բոլոր ամիսների կուտակային աճի ցուցանիշները:

Հունվար-օգոստոս ամիսների տվյալներով² ծառայությունների աճը կազմել է 4.9%, որին առավելապես նպաստել է «կացություն և հանրային սննդի կազմակերպում» ենթաճյուղի շուրջ 71.3% աճը (նպաստումը կազմել է 4.0 տոկոսային կետ): Ծառայությունների ոլորտի աճին շուրջ 7.7 տոկոսային կետով հակազդել է «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղի շուրջ 34.8% անկումը: Ծառայությունների մնացած ենթաճյուղերն ունեցել են դրական դինամիկա՝ ընդհանուր աճին նպաստելով միջին հաշվով շուրջ 1.0 տոկոսային կետի չափով:

² Ծառայությունների կառուցվածքը 2021թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտում աճի տեմպը կտրուկ դանդաղել է: Ընթացիկ տարվա օգոստոսին առևտրի ծավալների աճը նախորդ տարվա օգոստոսի համեմատ կազմել է 5.0%, իսկ սեպտեմբերին կտրուկ դանդաղել է՝ կազմելով 1.4%: Հունվար-սեպտեմբեր ամիսների աճը նույնպես դանդաղել է՝ կազմելով 6.4%: 2021թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին 2019թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ առևտրի ծավալները նվազել են շուրջ 5.7%-ով՝ նախորդ ամսվա համեմատ վատթարանալով շուրջ 0.5 տոկոսային կետով:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %



Ապրանքների արտահանման ծավալների աճի տեմպը զգալիորեն դանդաղել է: 2021թ. սեպտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ


ապրանքների արտահանման ծավալը կրճատվել է 11.5%-ով, ինչի արդյունքում հունվար-սեպտեմբեր ամիսների աճը դանդաղել է շուրջ 4.7 տոկոսային կետով՝ կազմելով 17.2%:

Հունվար-օգոստոս ամիսների տվյալներով³ արտահանման 21.9% աճից 11.3 տոկոսային կետը պայմանավորված է եղել հանքահումքային արտադրանքի արտահանման շուրջ 33.8% աճով (ինչն էլ իր հերթին պայմանավորված է մետաղների միջազգային գների աճով): Արտահանմանը դրական նպաստում են ունեցել նաև «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «բուսական ծագման արտադրանք» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերի աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.3, 2.5 և 1.9 տոկոսային կետ:

Արտահանման աճին շարունակել են հակազդել «սարքեր և ապարատներ» (անկումը՝ 44.9%) և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (անկումը՝ 13.5%) ապրանքախմբերի արտահանման ծավալների անկումը, որոնք ընդհանուր արտահանման աճին հակազդել են համապատասխանաբար 0.9 և 2.0 տոկոսային կետով:

Արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են, ինչի արդյունքում 0.1 տոկոսային կետով բարելավվել են հունվար-ապրիլ և հունվար-օգոստոս ամիսների արտահանման աճի ցուցանիշները:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Օգոստոսի անկման ցուցանիշից հետո, սեպտեմբերին ներմուծման ծավալները կրկին աճել են: 2021թ. օգոստոսին նախորդ տարվա նույն ամսվա

³ Արտահանման կառուցվածքը 2021թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

համեմատ ներմուծման ծավալները կրճատվել են 6.2%-ով, իսկ սեպտեմբերին գրանցվել է ներմուծման շուրջ 20.1% աճ: Հունվար-սեպտեմբեր ամիսներին ներմուծման ծավալների աճը 2020թ. նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 9.4%, սակայն 2019թ. համեմատ ներմուծման ծավալները դեռևս մնում են անկումային՝ լինելով շուրջ 4.8%-ով ցածր:

2021թ. հունվար-օգոստոս ամիսների տվյալներով⁴ ներմուծման ծավալների աճին զգալի նպաստում են ունեցել «հանքահումքային արտադրանք», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.5, 2.1 և 1.1 տոկոսային կետ:

ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են նախորդ ամիսների ներմուծման ցուցանիշները, ինչի արդյունքում հունվար-հուլիս ամիսների ներմուծման աճի ցուցանիշը բարելավվել է 0.1, իսկ հունվար-օգոստոս ամիսների ցուցանիշը՝ 0.2 տոկոսային կետով:


3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2021թ. հունվար-օգոստոս ամիսներին միջին անվանական աշխատավարձերի աճը ցածր է եղել գնաճի տեմպից⁵: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվար-օգոստոս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 6.0%-ով՝ կազմելով 198,368.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 3.6%-ով և կազմել 170,210.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6.9%-ով՝ կազմելով 210,740.0 դրամ:

⁴ Ներմուծման կառուցվածքը 2021թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

⁵ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից դադարեցվել է հաշվետու ամսվա աշխատավարձերի ցուցանիշի հրապարակումը օպերատիվ տվյալների հրապարակման հետ միասին: Փոխարենը, աշխատավարձի տվյալները հրապարակվում են ավելի ուշ՝ հաշվետու ամսվան հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2020-2021թթ. հունվար-օգոստոս ամիսներին, %




Նույն ժամանակահատվածում անվանական աշխատավարձի աճի տեմպը ավելի ցածր է եղել, քան գնաճի տեմպը, ինչի պատճառով իրական աշխատավարձերը (գնաճով ճշգրտված աշխատավարձերը) նվազել են շուրջ 0.4%-ով:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, % (աճը նշանակում է << դրամի արժևորում)





2021 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին ՀՀ դրամի արժեզրկման տեմպը զգալիորեն դանդաղել է: Հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ՀՀ դրամն արժեզրկվել է ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ, սակայն վերջին ամիսներին՝ հատկապես հունիսից սկսած արժեզրկման տեմպը զգալիորեն դանդաղել է: Արժեզրկման չափը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ կազմել է համապատասխանաբար 5.3% և 11.1%: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը շարունակում է մնալ արժեզրկված, որի չափը կազմել է շուրջ 0.8%:


Հատկանշական է, որ ժամանակահատվածի վերջի՝ սեպտեմբերի 31-ի դրությամբ, նախորդ տարվա նույն օրվա համեմատ ՀՀ դրամն արդեն արժևորվել է ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ համապատասխանաբար 0.9 և 1.8 տոկոսով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկման տեմպը խորացել է՝ կազմելով 6.3%:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁶

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի հարկային եկամուտների աճի տեմպը փոքր-ինչ արագացել է: Պետական բյուջեի հարկային եկամուտները 2021թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 11.9%-ով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հունվար-սեպտեմբեր ամիսներին հիմնականում պայմանավորված է եղել ԱԱՀ-ի (աճը՝ 14.3%), մաքսատուրքի (աճը՝ 33.4%) և պարտադիր սոցիալական վճարների (աճը՝ 82.0%) զծով հարկային մուտքերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.7, 1.5 և 1.4 տոկոսային կետ: Հարկային եկամուտների աճին զգալիորեն՝ շուրջ 1.2 տոկոսային կետով, նպաստել է նաև պետական տուրքերի աճը, որը պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքի արտահանման համար սեպտեմբերից գործող պետական տուրքի առկայությամբ:

⁶ Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների


	2020թ. հունվար-սեպտեմբեր		2021թ. հունվար-սեպտեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	-5.8	-5.8	11.9	11.9
ԱԱՀ	-5.9	-2.0	14.3	4.7
Շահութահարկ	-17.5	-2.4	7.3	0.9
Եկամտային հարկ	1.9	0.5	2.7	0.8
Ակցիզային հարկ	1.7	0.1	-9.1	-0.7
Շրջանառության հարկ	-3.6	-0.1	14.6	0.3
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	2.8	0.1	17.3	0.7
Մաքսատուրք	-28.8	-1.8	33.4	1.5
Սոցիալական վճար	25.6	0.3	82.0	1.4
Այլ հարկային եկամուտներ	18.4	0.3	84.1	1.5
Պետական տուրք	-24.6	-0.7	52.7	1.2

5.2. Պետական պարտք

2021թ. սեպտեմբերի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 9,038.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա սեպտեմբերի նկատմամբ աճելով 15.1%-ով: Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է՝ կազմելով 8,564.5 մլն ԱՄՆ դոլար և 2020թ. նույն ամսվա համեմատ աճելով 16.1%-ով:

Սեպտեմբերի դրությամբ պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքները շարունակել են աճել՝ հասնելով 8.4%-ի՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով 2.8 տոկոսային կետով, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը սեպտեմբերի դրությամբ աճել է 2.9 տոկոսային կետով՝ կազմելով 9.4%: Այս դինամիկան մտահոգիչ է, քանի որ այսպիսի բարձր տոկոսադրույքների պարտատոմսերի թողարկումը զգալիորեն մեծացնելու է կառավարության պարտքի սպասարկման ծախսերը և դժվարացնելու է պակասուրդի ֆինանսավորումը:


Գծապատկեր 12. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 13. 12-ամսյա գնաճ, %




Գնաճը շարունակում է մնալ բավական բարձր, սակայն սեպտեմբերի գնաճի արագացման տեմպը մեղմվել է: 12-ամսյա գնաճն ընթացիկ տարվա սեպտեմբերին կազմել է 8.9%՝ նախորդ ամսվա նկատմամբ արագանալով շուրջ 0.1 տոկոսային կետով:

Գնաճային միջավայրին արձագանքելով՝ ՀՀ ԿԲ-ն սեպտեմբերին ևս 0.25 տոկոսային կետով բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 7.25%, ինչը նպաստել է գնաճի տեմպի որոշակի կայունացմանը: Սակայն, գնաճի տեմպի դանդաղման միտումներ և նախադրյալներ դեռևս չեն

նկատվում, ինչը մտահոգիչ է, քանի որ տնտեսական ակտիվության տեմպի դանդաղման պարագայում գների աճն ավելի մեծ բացասական հետևանքներ կունենա՝ կապված բնակչության իրական եկամուտների և կենսամակարդակի նվազման հետ:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 14. Ավանդների 12-ամսյա աճը, %



2021թ. սեպտեմբերին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը արագացել է՝ կապված բազայի էֆեկտի հետ: Սեպտեմբերի վերջի դրությամբ ավանդների ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 7.9%-ով՝ արագանալով 1.9 տոկոսային կետով: Սակայն, պետք է նշել, որ 2021թ. օգոստոսի համեմատ սեպտեմբերին ավանդների ծավալի աճ տեղի չի ունեցել, իսկ 12-ամսյա աճի արագացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախորդ տարվա սեպտեմբերին գրանցվել է ավանդների աճի տեմպի կտրուկ դանդաղում: Ընդ որում, ավանդների աճը պայմանավորված է ռեզիդենտներից ներգրավված ավանդների շուրջ 12.5% աճով, այն դեպքում, երբ ոչ ռեզիդենտների ավանդները նվազել են 4.9%-ով:

Գծապատկեր 15. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճը հիմնականում՝ շուրջ 5.3 տոկոսային կետով, պայմանավորված է ձեռնարկությունների կողմից ներդրված ավանդների աճով, իսկ ոչ ռեզիդենտների կողմից ներդրված ավանդների ծավալները նվազել են՝ ընդհանուր ավանդների աճին ունենալով 1.3 տոկոսային կետով բացասական նպաստում:

6.3. Վարկեր


Վարկերի ծավալների նվազման տեմպը 2021թ. սեպտեմբերին խորացել է: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2021 թվականի սեպտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել է շուրջ 3.8%-ով: Ընդ որում, վարկերի ծավալը 2020թ. դեկտեմբերի նկատմամբ նվազել է շուրջ 6.7%-ով:

Գծապատկեր 16. 2021թ. վարկերի 12-ամսյա աճերը՝ ըստ վարկառուների ռեզիդենտության, %



Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազում են առաջանցիկ տեմպով: Ընդ որում, ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազող են եղել 2021թ. գրեթե բոլոր ամիսներին: Սեպտեմբերին դրանց ծավալը նվազել է 9.7%-ով, իսկ նպաստումն ընդհանուր վարկերի աճին կազմել է -0.6 տոկոսային կետ: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազել են 3.4%-ով և վարկերի ընդհանուր ծավալին ունեցել են -3.2 տոկոսային կետ նպաստում:


Գծապատկեր 17. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը 2021 թվականին, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է իրավաբանական անձանց վարկերի շուրջ 6.8%-ով նվազմամբ, որի նպաստումը ռեզիդենտների ընդհանուր վարկերին

կազմել է -3.9 տոկոսային կետ: Այդ երևույթը խոսում է այն մասին, որ իրավաբանական անձիք հետաձգում են իրենց ներդրումային ծրագրերը՝ մի կողմից վարկեր չվերցնելով և մյուս կողմից ազատ դրամական միջոցները բանկերում որպես ավանդ ներդնելով:

Գծապատկեր 18. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի աճին, տոկոսային կետ



Վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի⁷ ուսումնասիրելու պարագայում կարող ենք նկատել, որ վարկերի նվազումը պայմանավորված է գրեթե բոլոր ոլորտներում վարկավորման նվազմամբ: Բացառություն են կազմում հիփոթեքային և շինարարության ոլորտին տրամադրվող վարկերի աճերը, որոնք ընդհանուր վարկերի աճին ունեցել են համապատասխանաբար 3.7 և 2.0 տոկոսային կետով դրական նպաստում: Դա բացատրվում է հիպոթեքային վարկերի տոկոսավճարների համար եկամտային հարկի վերադարձի հնարավորությամբ և ապագայում դրա վերացման հեռանկարով:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ


Համաճարակային իրավիճակը ՀՀ-ում կտրուկ վատթարացել է սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: 2021թ. սեպտեմբերից համավարակի նոր գրանցված դեպքերի միջին օրական ցուցանիշը զգալիորեն աճել է հասնելով 652-ի: Մահվան միջին օրական դեպքերը նույնպես աճել են՝ կազմելով 16 դեպք:

⁷ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները, ըստ ոլորտային դասակարգման և ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում: Այդ պատճառով, ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները մի դեպքում նվազում են 4.7%-ով, իսկ մյուս դեպքում՝ 3.8%-ով:

Հոկտեմբերին համավարակային իրավիճակը ավելի է վատթարացել. հիվանդության նոր գրանցված դեպքերի միջին օրական քանակը հասել է 1394-ի, իսկ մահացության դեպքերինը՝ 29-ի: Վերջինս աննախադեպ ցուցանիշ է COVID-19 համավարակի տարածման ողջ ընթացքում:

Աշխարհի մյուս երկրների հետ համեմատության մեջ ՀՀ-ում տիրող իրավիճակը նույնպես զգալիորեն վատթարացել է: Մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված դեպքերի թվով հոկտեմբերի 25-ի դրությամբ Հայաստանը զբաղեցնում է աշխարհում 41-րդ տեղը՝ նախորդ ամիս զբաղեցրած 47-րդ տեղի փոխարեն, իսկ մահվան դեպքերի թվով Հայաստանը տեղափոխվել է 26-րդ հորիզոնական՝ նախորդ ամսվա 32-րդ հորիզոնականից:

Գծապատկեր 19. Կորոնավիրուսի վարակման և մահացության միջին օրական դեպքերը Հայաստանում



* 2021թ. հոկտեմբերի 25-ի դրությամբ

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. **Տնտեսության բոլոր ոլորտներում արձանագրվող աճի տեմպի դանդաղումը մտահոգիչ է:** Ընթացիկ տարվա հունվար-սեպտեմբեր ամիսներին ՏԱՑ-ը կազմել է ընդամենը 4.4%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.4 տոկոսային կետով: Նման միտումների շարունակման պարագայում տարեկան ՏԱՑ-ը կկազմի լավագույն դեպքում 5.1%, իսկ առավել իրատեսական ենթադրություններով՝ շուրջ 4.0%: Սա, իհարկե, բավական ցածր ցուցանիշ կլինի՝ հաշվի առնելով նախորդ տարվա 7.4% տնտեսական անկումը, և կնշանակի, որ ՀՀ տնտեսությունը չի վերականգնվել: Այս պայմաններում, կառավարության ներկայացուցիչները պետք է պարզաբանեն, թե ինչու է տնտեսական աճը այդքան

հեռու խոստացված երկնիշ մակարդակից, և տնտեսական քաղաքականության ինչ միջոցառումներ են պատրաստվում իրականացնել տնտեսական աճի տեմպը բարձրացնելու ուղղությամբ:

2. Այսպիսի զարգացումների դեպքում վտանգվում է նաև հաջորդ տարիների տնտեսական աճը: 2022թ. պետական բյուջեի նախագծով հաջորդ տարի նախատեսվում է ապահովել 7.0% տնտեսական աճ: Սակայն, եթե ճգնաժամային 2020-ից հետո 2021թ. տնտեսական աճը լինի ցածր, ապա ինչի՞ հաշվին է հաջորդ տարի այդքան արագանալու տնտեսական աճը: 7.0% տնտեսական աճ ապահովելու համար անհրաժեշտ են զգալի ներդրումներ, որոնք պետք է իրականացվեն 2021 թվականին, որպեսզի հաջորդ տարի նպաստեն տնտեսական աճին: Սակայն ընթացիկ տարում նման ներդրումներ տեսանելի չեն, հետևաբար կառավարության սպասումները և կանխատեսումները արժանահավատ չեն:

3. Արդյունաբերության ոլորտի իրական թողարկումը շարունակում է նվազել: Ընդ որում, սեպտեմբերին նվազման տեմպ են ունեցել և՛ մշակող արդյունաբերության, և՛ հանքարդյունաբերության ոլորտները: Սա բավական մտահոգիչ պետք է լինի, քանի որ տնտեսության վերականգնման և հետագայում տնտեսական պոտենցիալի բարձրացման համար արդյունաբերության ոլորտն առանցքային նշանակություն ունի, իսկ դրա շարունակաբար անկումը նախանշում է հետագայում տնտեսական պոտենցիալի ավելի նվազման մասին:

4. ՀՀ-ում համաճարակային իրավիճակը կտրուկ վատթարացել է: Սեպտեմբերին ինչպես հիվանդության նոր դեպքերի, այնպես էլ մահացության դեպքերի վիճակագրությունը կտրուկ վատթարացել է: Ավելին՝ ՀՀ-ում իրավիճակը վատթարացել է նաև աշխարհի մյուս երկրների համեմատ: Այսպես, մեկ միլիոն բնակիչների հաշվով ընդհանուր մահացության դեպքերով ՀՀ-ն զբաղեցնում է աշխարհի բոլոր երկրների շարքում 26-րդ տեղը, ինչն աննախադեպ վատ ցուցանիշ է Հայաստանի համար: Այս պայմաններում, ՀՀ-ում պատվաստումների ցածր մակարդակը և հակահամաճարակային կանոնների պահպանման նկատմամբ ցածր վերահսկողությունը միայն վատթարացնում են իրավիճակը և ցույց են տալիս, որ կառավարությունը չի կարողանում համապատասխան մակարդակով կառավարել իրավիճակը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: